ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 13-ից 26-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Ֆուճոու) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   1) Անժելա Փիլոյան
   2) Լուսինե Մելքումյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   1) << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի ավագ մասնագետ
   2) << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Ֆուճոու), 2024թ.-ի սեպտեմբերի 13-26-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպման ընթացքում ներկայացվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսությունը, ազատ տնտեսական գոտիներում գործող առևտրային կապերը, «Մեկ գոտի, մեկ ուղի» աշխարհի որոշակի հատվածը տնտեսական ու առևտրային կապերով միավորելու նախաձեռնության հաջողված փորձը, Կառավարության գործողությունները և վարչարարական մեխանիզմները ցածրածխածնային տնտեսության զարգացման ոլորտում, չինական ազատ տնտեսական գոտիների շրջանակում ներդրումների գլոբալ կառավարման փորձը և դրանց ռազմավարական կարգավորումները, տեղական իշխանությունների ազդեցությունը ինովացիոն զարգացման վրա, ազգային կամ տարածաշրջանային մրցակցային ռազմավարությունը, դրա գնահատումը և մրցունակության բարձրացումը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Գործուղման ընթացքում կազմակերպվել են.

- այց Ֆուճոյի քաղաքաշինության թանգարան,
- հանդիպում Շանհայի <<Yingke Shanghai>> իրավաբանական խորհրդատվական ընկերության ներկայացուցիչների հետ՝ ծանոթանալու միջազգային ներդրումների ոլորտում ընկերության կողմից մատուցվող ծառայություններին,
- հայ-չինական համագործակցության շրջանակում այց Շանհայի ազատ առևտրի գոտու Global Hub կենտրոն, ծանոթացել են Հայաստան տաղավարին, կազմակերպվել է պաշտոնական ընդունելություն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 33-րդ տարելիցի առթիվ,
- այց Ֆուճոուի ազատ տնտեսական գոտի՝ ծանոթանալու ազատ տնտեսական գոտիների զարգացման ոլորտում տեղական իշխանությունների դերակատարման հետ,
- այց Լեոնգ Չու գյուղ, հասկանալու թե ինչպես է թեյի արտադրությունը նպաստում գյուղական բնակավայրերում սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացմանը:

Գործուղման ընթացքում կազմակերպվել են մի շարք մշակութային այցեր՝ առևտրային կենտրոններ, քաղաքի տեսարժան վայրեր, խոհանոցի և բնության թանգարաններ, բնության թանգարանում ծանոթացել են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտին նվիրված ցուցադրությանը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Խոսվել է երկու երկրների միջև առկա և հնարավոր առևտրատնտեսական ոլորտում համագործակցության հնարավորությունների և զարգացման հեռանկարների մասին:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

Լ. Մելքումյան

Ա. Փիլոյան

01 հոկտեմբերի 2024թ.